ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/11, 15.04.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Որդի Մեր» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Մելորացիա» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ՀՀԷԵԲՊՆ-Մ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցում, մեխանիզմների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

1.Դադարեցնել «Մելորացիա» ՓԲԸ-ի կարիքների համար՝ մեխանիզմների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԷԵԲՊՆ-Մ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.07.2019թ. թիվ 4 արձանագրության 2.1.1 կետի համաձայն՝ «Դավիթ-Նորայր» ՍՊԸ-ին, «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ին և Ա/Ձ Հրաչյա Հարությունյանին ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին որոշումները:

2.Պարտավորեցնել «ՀՀԷԵԲՊՆ-Մ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղյալ հայտարարել «ՀՀԷԵԲՊՆ-Մ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստերին առցանց կարող եք հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով կայք-էջում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ «ՈՐԴԻ ՄՀԵՐ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Էջմիածին, Իսակով 1 փակ. 9ա տուն
հեռ: 093692442
էլ.փոստ՝ vordymher@mail.ru

Պատվիրատու՝ «Մելիորացիա» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, գ. Հայանիստ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՄԵԼԻՈՐԱՑԻԱ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ մեխանիզմների ձեռքբերման նպատակով
հայտարարված «ՀՀԷԵԲՊՆ-Մ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով ԳՀ ընթացակարգ

ԲՈՂՈՔ

- *Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.*

«ՄԵԼԻՈՐԱՑԻԱ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ մեխանիզմների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԷԵԲՊՆ-Մ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Համաձայն Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի», սահմանվել են հետևյալ պարամետրերը /ըստ չափաբաժինների/,

1 Միաշերեփ էքսկավատորներ - Էքսկավատոր դրագլայն տիպի կամ համարժեք, շարժասարքը՝ թրթուրավոր, շարժիչը դիզելային, չփչվող, վառելանյութի անմիջական սրսկումով, մոդելը՝ Դ-108-8, հզորությունը՝ 50-60-ԿՎՏ, շարժման արագությունը՝ 1,7-3,0 կմ/ժ, շերեփի ծավալը 0.65-0,8 մ3, քաշը՝ 21,2 տ, հիմնական կառավարումը պնևմատիկ, օժանդակ կառավարումը լծակով, արգելակները՝ աշխատանքային և կանգառային՝ սկավառակային, չոր:

2 Միաշերեփ էքսկավատորներ - Էքսկավատոր դրագլայն տիպի կամ համարժեք, շարժասարքը՝ թրթուրավոր, շարժիչը դիզելային, չփչվող, վառելանյութի անմիջական սրսկումով, մոդելը՝ Դ-108-8, հզորությունը՝ 50-60-ԿՎՏ, շարժման արագությունը՝ 1,7-3,0 կմ/ժ, շերեփի ծավալը 0.65-0,8 մ3, քաշը՝ 21,2 տ, հիմնական կառավարումը պնևմատիկ, օժանդակ կառավարումը լծակով, արգելակները՝ աշխատանքային և կանգառային՝ սկավառակային, չոր:

3 Միաշերեփ էքսկավատորներ-Էքսկավատոր դրագլայն տիպի կամ համարժեք, շարժասարքը՝ թրթուրավոր, շարժիչը դիզելային, չփչվող, վառելանյութի անմիջական սրսկումով, մոդելը՝ Դ-108-8, հզորությունը՝ 50-60-ԿՎՏ, շարժման արագությունը՝ 1,7-3,0 կմ/ժ, շերեփի

Մուտք N Մ-16740-19
5 «15» 04 2019թ.

ծավալը 0.65-0,8 մ3, քաշը՝ 21,2 տ, հիմնական կառավարումը պնևմատիկ, օժանդակ կառավարումը լծակով, արգելակները՝ աշխատանքային և կանգառային՝ սկավառակային, չոր:

4 Միաշերեփ էքսկավատորներ-էքսկավատոր դրագլայն տիպի կամ համարժեք, շարժասարքը՝ թրթուրավոր, շարժիչը դիզելային, չփչվող, վառելանյութի անմիջական սրսկումով, մոդելը՝ Դ-108-8, հզորությունը՝ 50-60-ԿՎՏ, շարժման արագությունը՝ 1,7-3,0 կմ/ժ, շերեփի ծավալը 0.65-0,8 մ3, քաշը՝ 21,2 տ, հիմնական կառավարումը պնևմատիկ, օժանդակ կառավարումը լծակով, արգելակները՝ աշխատանքային և կանգառային՝ սկավառակային, չոր:

5 Ինքնաթափ բեռնատարներ-Կամազ 5511կամ համարժեք ինքնաթափ բեռնատար ավտոմեքենա 10 տ բեռնատարողությամբ:

6 Ինքնաթափ բեռնատարներ-Կամազ 5511կամ համարժեք ինքնաթափ բեռնատար ավտոմեքենա 10 տ բեռնատարողությամբ:

7 Բուլդոզերներ-Т-130 կամ Т170 համարժեք մակնիշի բուլդոզեր:

8 Բուլդոզերներ-Т-130 կամ Т170 համարժեք մակնիշի բուլդոզեր:

Սակայն www.gnumner.am համացնացային կայքում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ պայմանագիրը կնքվել է գնանշման հարցման հրավերից տարբերվող կամ այլ կերպ ասած այլ տենիկական-բնութագիր ունեցող տենիկա առաջարկող ընկերության հետ /կցվում է/, ընդ որում հրավերում փոփոխություն չկատարելու արդյունքում:

- *Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի *միասնական կանոններով* մրցակցային, թափանցիկ, *համաչափ, հրապարակային* և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով *մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.*

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար *չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.*

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը...:

Գտնում ենք, որ «ՀՀԷԵԲՊՆ-Մ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտում, մասնավորապես՝ 28.03.2019թ. Ընկերություններից մեկի կողմից հրավերի վերաբերյալ համապատասան պարզաբանումներ ստանալու նպատակով հարցում է կատարվել Պատվիրատուին, որոնց վերաբերյալ 29.03.2019թ. տրամադրվել է հետևյալ պարզաբանումները.

Հարցադրում N 1՝ 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների համար խնդրում ենք տալ պարզաբանում. Արտադրման տարեթիվ՝ միջակայք, տեխնիկական ինչ վիճակ, տեխնիկական ինչ հագեցվածություն:

Պարզաբանում N՝ 1 5-րդ և 6-րդ չափաբաժիններով նախատեսված ինքնաթափ բեռնատարի ձեռքբերմն համար առաջադրված տեխնիկական պահանջները հետևյալն են՝

Տրանսպորտային միջոցի տեսակը՝ բեռնատար

Թափքի տեսակը՝ ինքնաթափ

Արտադրության տարեթիվը՝ 1982-1990թթ.

Շարժիչի հզորությունը(ԿՎՏ/Ձ.ՈՒ.)՝ 110/150

Թույլատրված առավելագույն զանգվածը(կգ)՝ 10850

Անվադողերը մաշվածությունը՝ ոչ ավել 20%-ից

Փոխանցման տուփ՝ սինխրոն 5-աստիճան

Շարժիչ՝ V ձեւ, 8 գլանային, 3000 պտույտ/ րոպե

ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆ Ապրանքի հանձնման /տեղափոխման ծախսերը/ պարտականությունը դնել մատակարարի վրա:

7-րդ և 8-րդ չափաբաժիններով նախատեսված բուլդոզերների ձեռքբերմն համար առաջադրված տեխնիկական պահանջները հետևյալն են՝

Արտադրության տարեթիվը՝ 1988-1990թթ.

Քաշը, շինարարական, կգ՝ 15000

Շասսի տեսակը՝ թրթուր

Կոշիկի լայնությունը, մմ՝ 500, մաշվածությունը 10-15%-ից ոչ ավել

Շարժիչի հզորությունը, kW (hp)՝ 125 (170)

Վառելիքի բաք, լ՝ 300

Հովացման համակարգ, լ՝ 60

Շարժիչի քսայուղային համակարգ, լ՝ 32

ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆ Ապրանքի հանձնման /տեղափոխման ծախսերը/ պարտականությունը դնել մատակարարի վրա:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ վիճարկվող գնանշման հարցման հրավերի տեխնիկական-բնութագրի և վերոնշված պարզաբանման մեջ առկա են էական տարբերություններ, որոնք պետք է ներառվեին հրավերում կամ, այլ կերպ ասած, պարզաբանումների հիման վրա կատարվեր հրավերի փոփոխություն:

Այնուհանդերձ, «ՀՀԷԵԲՊՆ-Մ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չկատարելով հրավերի փոփոխություն, ըստ որի անհավասար պայմաններ են ստեղծվել մասնակից կամ մասնակցության հայտ ներկայացնել ցանկացող այլ մասնակիցների համար, քանի որ միայն պարզաբանումից է պարզ դարձել, որ օրինակ՝ 7-րդ և 8-րդ չափաբաժիններով նախատեսված բուլդոզերների ձեռքբերման համար առաջադրված տեխնիկայի արտադրության տարեթիվը նախատեսված է եղել՝ 1988-1990թթ:

Ավելին, մեր ունեցած տեղեկությունների համաձայն՝ պայմանագիրը հաղթող մասնակցի հետ կնքվում է ոչ թե հրավերի տեխնիկական բնութագրի համապատասխան, այլ հրավերի վերաբերյալ տրված պարզաբանման մեջ նշված նկարագրության համաձայն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ...:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

- Դադարեցնել «ՄԵԼԻՈՐԱՑԻԱ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ մեխանիզմների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԷԵԲՊՆ-Մ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.07.2019թ. թիվ 4 արձանագրության 2.1.1 կետի համաձայն՝ «Դավիթ-Նորայր» ՍՊԸ-ին, «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ին և Ա/Ձ Հրաչյա Հարությունյանին ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին որոշումները:

- Պարտավորեցնել «ՀՀԷԵԲՊՆ-Մ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղյալ հայտարարել «ՀՀԷԵԲՊՆ-Մ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցումը:

Առդիր՝ 6 թերթ:

Հարգանքով՝

«ՈՐԴԻ ՄՀԵՐ» ՍՊԸ-ի տնօրեն՝ _____ Հ. Բաղրամյան

15. 04. 2019թ.